առաջ բաց է արել մեր հայրենի աշխարհի եւ նրա ժողովուրդի բնական եւ հոգեւոր գանձերը, սէր ու հետաքրքրութիւն է զարթեցրել նրանց մէջ: Արովեան մինչեւ իսկ իր ժողոված, անձամբ գրի առած բազմաթիւ նիւթերն ու տեղեկութիւնները դրել է այդ եւրոպացիների տրամադրութեան տակ, որոնք եւ գիտցել են մեծ չափերով ու լաւագոյն կերպով օգտագործել նրանց:

Համարձակ կարելի է ասել, որ մի Վաղնէրի ու Աբիխի, մի Բոտէնշտէդտի ու Հաքստհաուզէնի, ինչպէս նաեւ ուրիշ ոմանց աշխատութիւնները շատ բանով թերի պիտի լինէին, պիտի զգալիօրէն կորցնէին իրենց գիտական արժէքը, եթէ Արովեան անմիջական մասնակցութիւն ցոյց տուած չլինէր՝ նիւթեր մատակարարելով նրանց: Եւ պէտք է ասել, որ այդ եւրոպացիները իրենք է, գոնէ շատերը նրանցից, որ հրապարակաւ խոստովանում են այդ: Ահա այդ տեսակէտից եւս հոյակապ է եղել մեր նոր գրականութեան հօր նշանակութիւնը: Մի բան սակայն, որ յաճախ է մոռացութեան տրւում:

Ցիշածս եւրոպացի ճամբորդների շարքում մի առանձնայատուկ տեղ է գրաւում գերման Հաքստհաուզէնը իր գործով: Մասնակի է նաեւ այն ծառայութիւնը, որ մատուցել է այդ գործին Խաչատուր Աբովեան: Խնդիրն այն է, որ Հաքստհաուզէն որպէս իր ժամանակի տնտեսական-ընկերային հարցերի մասնագէտ, այդ առաջադրութեամբ էլ Անդրկովկաս եւ Հայաստան է ճամբորդում: Առաւելապէս նման հարցերն են, որ կազմում են Հաքստհաուզէնի աշխատութեան նիւթը: Եւ հէնց նրա համար էլ ուշադրաւ է այդ աշխատութիւնը մեզ համար, որ եզակի է իր տեսակում:

Հայ լեզուն ու պատմութիւնը, ինչպէս եւ Հայաստանի բնութիւնն ու աշխարհագրութիւնը մէկէ աւելի օտարների եւ մանաւանդ մերայիններ հետաքրքրութեան եւ ուսումնասիրութեան առարկայ են դարձած հին ու նոր անցեալում: Իսկ մենք դժուար թէ ցոյց տանք Հաքստհաուզէնից դուրս ուրիշ մէկը, որ մեզնից 80 եւ աւելի տարիներ առաջ Հայաստանի եւ հայ ժողովուրդի ներքին-ընկերային կեանքը իր բազմազան կողմերով ուսումնասիրութեան առարկայ դարձրած լինէր: 19-րդ դարի առաջին կիսի հայ կենցաղն է, իր բովանդակ կողմերով, որ հաւատարմօրէն արձանագրուած ենք տեսնում Հաքստհաուզէնի գործի մէջ:

Մենք չարունակ զանգատւում ենք այն մասին, թէ անցած-գնացած դարերի մեր մատենագիրները, մեր պատմագիրները գոհացել են առաւելապէս եկեղեցական ու քաղաքական դէպքերի արձանագրութեամբ եւ նկարագրութեամբ: Մենք դժգոհում ենք, որ նրանք մեզ չա՛տ, չա՞տ քիչ բան են հաղորդում այն մասին, թէ իրենց նկարագրած դարաշրջանում ի՛նչպէս էր ապրում հայ ժողովուրդը ինքն իր մէջ, հասարակական-ընկերային ի՛նչ պայմաններ էին իրենց դրոշմը դնում նրա կենցաղավարութեան վրայ: Կարճ՝ թէ մենք չափազանց քիչ բան գիտենք հայութեան ներքին կեանքի մասին՝ անցեալում:

Թէեւ չափազանցուած, բայց եւ այնպէս ճշմարտութեան համապատասխանում է այս տարածուած կարծիքը: Իսկ արդեօ՞ք շատ բախտաւոր պիտի սեպենք մենք մեզ, եթէ նոյն հարցերին նոյնպիսի չափանիշով մօտենալու լինինք՝ ո՛ր ժամանակների վերաբերմամբ: Դժուար թէ: Այստեղ դարձեալ օտարնե՛րն են մեզ օգնութեան հասնողը:

Անկարելի է մատնանշել հայերէն լեզուով գրուած մի հրատարակութիւն, որ մեզ հանդամանօրէն տեղեկացնէր այն մասին, թէ 19-րդ դարի երեսնական եւ քառասնական թուականներին, երբ Արեւելեան Հայաստանը նոր էր մտել ռուսական տիրապետութեան տակ, ի՛նչ պատկեր էր ներկայացնում նրա ներքին-ընկերային կեանքը:

Ահա այդ գործն է, որ կատարել է մի Հաքստհաուզէն: Դրա համար էլ է, որ մենք այդ գործը իր տեսակում եզակի անուանեցինք: Եզակի ոչ միայն այն տեսակէտից, որ Հաքստհաուզէնի եւ նրա չափերով ժամանակակից մի ուրիշը — ոչ հայ, ոչ էլ եւրոպացի կամ ռուս — չէ կատարել այդպիսի մի աշխատանք, որով եւ նա մեզ համար նաեւ առանձնապէս թանկագին աղբիւր է հանդիսանում, այլ եւ այն տեսակէտից, որ եթէ այդ աշխատանքը ճիշդ ժամանակին չանէր Հաքստհաուզէն, յետոյ՝ թէկուզ մէկ-երկու տասնամեակներ անց՝ անկարելի պիտի դառնար նրա իրագործումը ցանկալի ձեւով ու չափով: